գայինք դպրութեամբ լուսաւորեալ, ազգիս անունը արգոյ ընծայելու օտարաց առջև։

Նախիջևան հայաբնակ քաղաք է 16,000 բնակչով, որոց թէպէտ իբրև կէսն օտարազգի կը համարուին, այլ քաղաքին մէջ հայ տարրն է տիրողը, մնացեալք ծառայ մարդիկ են։ Նախիջևանի հայ բնակչաց վրայ խօսելով մեզ հարկ կը լինի սակաւ մի ուղիղ նպատակէն խոտորելով, ընդհանուր գաղթական Հայոց թիւերով զբաղիլ, որ կարծեմ հետաքրքրական լինի ընթերցողաց։ Խառնթախառ՝ վաւերական աղբիւրներէ հաւաքելով, ընդհանուր գաղթական քրիստոնէից թիւը՝ որ եղած են 'ի Ղրիմէ 1778 ին՝ 31,386 կը դնէ. այս ժողովրդոց կէսը (եթէ ոչ և աւելին) Հայք են, զի քիչ վերջ ազգային գրիչք 3000տուն Հայոց կը գրեն. եթէ տուն գլուխ հինգ հոգի հաշուելու լինիմք, Հայոց թիւը 15,000 կը լինի։ Այժմ Նախիջևան 8,000 կը հաշուի քաղաքին ազգայնոց թիւը, նոյնչափ կամ սակաւ մի պակաս՝ Նախիջևանու հինգ գեղերուն բնակիչք, ընդ ամէնը բոլոր հաշուով՝ Նախիջևան իւր գեղերով 16,000 հայ Անեցի գաղթականք, եթէ սոցա վրայ աւելցնենք 5,000 Ղրիմեցի Հայք, որք դարձել են յԵկատերինեսլաւ, կը լինի 21,000։ Ազովեան կամ Եկատերինեսլաւ գաւառի չատ քաղաքաց մէջ և Կուբան գետի վրայ ցրուած Հայերն, հաւանական է որ 9ը կամ 10ը հազարի հասնին. որով Ղրիմէ ելնող հայ գաղթականաց թիւը, 'ի միասին հաշուելով վերադարձողները, կը լինի 30,000։ Հարիւր տարուան միջոց կրկնապատիկ եղած է Հայոց թիւը, որ թէպէտ օտար ազգաց ազգահամարին նայելով չէ մխիթարական, այլ այս պէտք